

««Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն իրականացնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95 որոշում

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3-րդ հոդվածին, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային կանոնակարգին եւ «Անասնաբուժասանիտարական միջոցների վերաբերյալ» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրի 7-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը ՈՐՈՇԵՑ.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն իրականացնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) վերնագրում եւ 1.1 կետում «Միասնական կարգի» բառերը փոխարինել «միասնական կարգի» բառերով,

բ) վերնագրում եւ տեքստում «մաքսային միություն» բառերը՝ համապատասխան հղվով, փոխարինել «Մաքսային միություն» բառերով՝ համապատասխան հղվով,

գ) 2.1 կետում ավելացնել 2.1.13 ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«2.1.13. «արտահանող երկրի իրավասու մարմին՝ արտահանող երկրի պետական մարմին, որի իրավասությանն են վերապահված անասնաբուժական հսկողության (վերահսկողության) եւ (կամ) կենդանիների բարեկեցությունն ու

առողջության պահպանումը ապահովելու, ինչպես նաև միջազգային անասնաբուժական սերտիֆիկացման հարցերը:»,

դ) 3.8 կետը լրացնել հետեյալ բովանդակությամբ պարբերություններով՝

«Անասնաբուժական սերտիֆիկատները, որոնք ձեւակերպված են թղթային ձեւաթղթերով, պետք է ստորագրվեն արտահանող երկրի իրավասու մարմնի պաշտոնատար անձի կողմից եւ պետք է ունենան այդ մարմնի կնիքը:

Անասնաբուժական սերտիֆիկատի յուրաքանչյուր էջ պետք է ունենա անասնաբուժական սերտիֆիկատի եզակի համար եւ երկու թիվ, որոնցից առաջինը նշանակում է էջի հերթական համարը, երկրորդը՝ էջերի ընդհանուր թիվը, այս թվերի միջեւ դրվում է «-ից» մասնիկը: Անասնաբուժական սերտիֆիկատի տեքստում չի թույլատրվում կատարել ուղղումներ՝ բացառությամբ վրան գիծ քաշելու դեպքերի, որոնք նախատեսված են անասնաբուժական սերտիֆիկատի ձեւաթղթով, կամ կատարվում են այլ համաձայնեցված դեպքերում: Այդպիսի փոփոխությունները պետք է վավերացվեն արտահանող երկրի իրավասու մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ այդ իրավասու մարմնի կնիքով:

Արտահանող երկրի իրավասու մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատը կորցնելու կամ վնասելու դեպքում դրա փոխարեն կարող է ձեւակերպվել նոր անասնաբուժական սերտիֆիկատ:

Եթե արտահանող երկրի իրավասու մարմնի պաշտոնատար անձի կողմից անասնաբուժական սերտիֆիկատը ձեւակերպելու ժամանակ թույլ է տրվել տեխնիկական սխալ, կամ պարզվել է, որ անասնաբուժական սերտիֆիկատում նշված նախնական տեղեկությունները ճիշտ չեն, ապա թույլատրվում է փոփոխել դրանում պարունակվող հետեյալ տեղեկությունները՝ բեռնառաքողի անունը եւ հասցեն, բեռն ստացողի անունը եւ հասցեն, տրանսպորտը (վագոնի, ավտոմեքենայի համարը, ինքնաթիռի չվերթի համարը, նավի անվանումը), տարանցիկ փոխադրման երկիրը (երկրները), Մաքսային միության մաքսային սահմանի հատման կետը:

Այդպիսի փոփոխությունները թույլատրվում են, եթե դրանք կատարվել են արտահանող երկրի իրավասու մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ առանց խախտելու սերտիֆիկացման կանոնները, եւ եթե դրանց ուղղումը չի փոխում բեռի բնութագիրը, ինչպես նաեւ ներմուծող երկրի կողմից սահմանված պահանջներին համապատասխան՝ ըստ նշանակության օգտագործելու համար դրա պիտանիությունը: Կատարված փոփոխությունները պետք է վավերացվեն արտահանող երկրի իրավասու մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ այդ իրավասու մարմնի կնիքով:

Անասնաբուժական սերտիֆիկատի փոխարինումն իրականացվում է արտահանող երկրի իրավասու մարմնի կողմից, որը տրամադրել է այն: Նոր սերտիֆիկատի մեջ նշում է կատարվում այն մասին, որ այն փոխարինում է ավելի վաղ տրված անասնաբուժական սերտիֆիկատին, ինչպես նաեւ նշվում է կորցրած (վնասված) անասնաբուժական սերտիֆիկատի համարը եւ տրման ամսաթիվը: Նորով փոխարինվող անասնաբուժական սերտիֆիկատը պետք է չեղարկվի եւ, հնարավորության դեպքում, վերադարձվի այն տրամադրող մարմնին:»,

ե) 3.9 կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերությամբ՝

«Մաքսային միության մաքսային տարածք հսկողության վերցված ապրանք ներմուծելու դեպքում, որն ուղեկցվում է այնպիսի անասնաբուժական սերտիֆիկատով, որը տարբերվում է երրորդ երկրներից Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող հսկողության վերցված ապրանքների համար կիրառվող՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 607 որոշմամբ հաստատված Միասնական անասնաբուժական սերտիֆիկատների ձեւաչափերից, համաձայնեցված է Կողմի լիազոր մարմնի եւ երրորդ երկրի կողմից եւ որում առկա են հսկողության վերցված ապրանքը տարբեր Կողմերի տարածք ներմուծելու համար տարբերվող պահանջներ կամ պայմաններ, ներմուծող երկիրն ապահովում է ներմուծվող ապրանքի շրջանառության նկատմամբ վերահսկողությունն այնպես, որ բացառվի դրա տեղափոխումը այն Կողմի տարածք, որտեղ դրա ներմուծումն արգելված է:»,

զ) 6.3 կետում «ուղարկող երկրի» բառերը փոխարինել «արտահանող երկրի» բառերով:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամները՝

Բելառուսի Հանրապետությունից	Ղազախստանի Հանրապետությունից	Ռուսաստանի Դաշնությունից
Ս. Ռումաս	Բ. Սազինտաեւ	Ի. Շուվալով